ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՀԱՄԱՆՄԱՆ ԲՈՂՈՔԻ ՆԵՐԿԱՅԱՑՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Համանման բողոքի ծածկագիրը և ամսաթիվը՝ ԳԲՔԱ-ԼՕ-2022/08, 24.01.2022թ.

Բողոք բերող անձ՝ «Վերիտաս» ՍՊԸ

Պատվիրատու՝ ՀՀ պաշտպանության նախարարություն

Գնման ընթացակարգի ծածկագիրը՝ «ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-22-9/8» գնանշման հարցում

Գնման առարկան՝ լաբորատոր ազդանյութերի և պարագաների ձեռքբերում

Բողոքի պահանջը՝ պարտավորեցնել չկայացած հայտարարել թիվ «ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-22-9/8» ծածկագրով գնման ընթացակարգը:

ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ՝ Լ. ՕՀԱՆՅԱՆ
ՔԱՐՏՈՒՂԱՐ՝ Ռ. ՄԿՐՏՉՅԱՆ

Տեղեկացնում ենք, որ «Գնումների մասին» ՀՀ օրենքի՝

- 50-րդ հոդվածի 10-րդ մասի համաձայն՝ յուրաքանչյուր անձ, որի շահերը խախտվել են կամ կարող են խախտվել բողոքարկման հիմք ծառայած գործողությունների արդյունքում, իրավունք ունի մասնակցելու բողոքարկման ընթացակարգին՝ մինչև բողոքի վերաբերյալ որոշում ընդունելու ժամկետը գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ներկայացնելով համանման բողոք: Նույն հոդվածի համաձայն՝ բողոքարկման

ընթացակարգին չմասնակցած անձը զրկվում է գնումների հետ կապված բողոքներ քննող անձին համանման բողոք ներկայացնելու իրավունքից,

- 51-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ներկայացված բողոքն ինքնաբերաբար կասեցնում է գնման գործընթացը՝ նույն օրենքի 50-րդ հոդվածի 9-րդ մասով նախատեսված հայտարարությունը հրապարակվելու օրվանից մինչև բողոքարկման վերաբերյալ ընդունված որոշման՝ տեղեկագրում հրապարակման օրը ներառյալ:

Գնումների հետ կապված բողոքներ

քննող անձ Լ. Օհանյանին

Հասցե ք. Երևան Մելիք Ադամյան 1

«Վերիտաս» ՍՊԸ տնօրեն Ա. Մխիթարյանից

Հասցե Նորապատ 9փ, 3տ., հեռ. 099546900

e-mail: veritasllc1@gmail.com

Պատվիրատու «ՀՀ պաշտպանության նախարարություն»

Հասցե՝ ք. Երևան, Բագրևանդի 5

Գնանշման հարցման ընթացակարգի

ծածկագիր <<ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-22-9/8>>

Գնման առարկա՝ <<լաբորատոր ազդանյութեր և պարագաներ>>

Բողոքի ծածկագիր ԳԲՔԱ-LO-2022/08

ԲՈՂՈՔ

1. Վեճի առարկան

1.1 «ՀՀ պաշտպանության նախարարություն»-ը լաբորատոր ազդանյութերի և պարագաների գնման նպատակով 2022թ. հունվարի 14-ին հրապարակել է <<ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-22-9/8>> ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ:

<<Ծանոթություն>> բաժնում Պատվիրատուի կողմից մասնավորապես դրվել են հետևյալ պահանջները

- Եվրամիության և/կամ ԵԱՏՄ երկրներից որևէ մեկում և/կամ ԱՄՆ-ում և/ կամ Ճապոնիայում ապրանքների գրանցման հավաստագիր (CE Mark կամ այլ): Բացառություն են կազմում ՀՀ-ում արտադրված ապրանքները,
- արտադրող կազմակերպության (կամ արտադրողի պաշտոնական ներկայացուցչի)՝ կողմից տվյալ ապրանքի համար տրված համապատասխանության և (կամ) որակի հավաստագիր:

Վերոնշյալ պահանջներից առաջինը սահմանափակում է մի շարք արտադրողների, կազմակերպությունների մասնակցությունը տվյալ ընթացակարգին, քանի որ օրինակ Շվեյցարիայում, Հարավային Կորեայում կամ Կանադայում գրանցված ապրանքներ ունեցող ոչ մի ընկերություն չի կարող մասնակցել տվյալ ընթացակարգին զուտ Պատվիրատուի կողմից կամայական չափանիշներով երկրները ֆիլտրելու անհիմն պահանջի հետևանքով:

Վերոնշյալ պահանջներից երկրորդը հանդիսանում է անհիմն և անիրագործելի: Որևէ ընկերություն, որևէ մատակարար չի կարող ներկայացնել արտադրող կազմակերպության (կամ արտադրողի պաշտոնական ներկայացուցչի)՝ կողմից տվյալ ապրանքի համար տրված համապատասխանության հավաստագիր:

2. Բողոքի փաստացի և իրավական հիմքերը

2.1 <<Ծանոթություն>> բաժնում Պատվիրատուի կողմից սահմանված <<Եվրամիության և/կամ ԵԱՏՄ երկրներից որևէ մեկում և/կամ ԱՄՆ-ում և/ կամ Ճապոնիայում ապրանքների գրանցման հավաստագիր (CE Mark կամ այլ): Բացառություն են կազմում ՀՀ-ում արտադրված ապրանքները>> պահանջը խտրական է և ոչ իրավաչափ, քանի որ խախտվում է գնման գործընթացին մասնակցելու իրավահավասարության սկզբունքը:

Գնումների մասին ՀՀ օրենքի Հոդված 3-ի 2 կետի 3) ենթակետում գրված է <<2. Գնումների գործընթացը հիմնվում է հետևյալ սկզբունքների վրա. 3) ցանկացած անձի համար, անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից, գնման գործընթացին մասնակցելու **<u>իրավահավասարություն</u>**:>>»

Նույն օրենքի Հոդված 7-ի 1 կետում գրված է <<Հոդված 7. Գնումներին մասնակցելու հավասարությունը.

1. Ցանկացած անձ, անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից, ունի գնման գործընթացին մասնակցելու հավասար իրավունք:>>:

Փաստացի, մի շարք բարձր վարկանիշ ունեցող երկրներում գրանցված ապրանքների արտադրողներ, ՀՀ-ում դրանց ներկայացուցիչ հանդիսացող կազմակերպություններ ի սկզբանե զրկված են այս ընթացակարգին մասնակցելու իրավունքից: Անհասկանալի է, թե պատվիրատուն որ նորմատիվ ակտով է առաջնորդվել և սահմանել ֆիլտր, այսպես կոչված ընդունելի երկրների ցանկ:

Ստացվում է, որ ցանկացած պատվիրատու այսուհետ կարող է ինքնուրույն, կամայական կերպով որոշել, որ օրինակ իր կարիքների բավարարման համար գնվելիք ապրանքները պետք է գրանցված լինեն հենց Գերմանիայում, մեկ ուրիշ պատվիրատու էլ կցանկանա, որ իրեն մատակարարվելիք ապրանքները գրանցված լինեն Աֆրիկայում և այսպես շարունակ: Անթույլատրելի է սահմանափակել կազմակերպությունների մասնակցությունը ըստ դրանց կողմից ներկայացվող ապրանքների գրանցման երկրի:

2.2 <<Ծանոթություն>> բաժնում Պատվիրատուի կողմից սահմանված "արտադրող կազմակերպության (կամ արտադրողի պաշտոնական ներկայացուցչի)՝ կողմից տվյալ ապրանքի համար տրված համապատասխանության և (կամ) որակի հավաստագիր" պահանջը իրավաչափ չէ, քանի որ այն անիրագործելի է, մասնավորապես որևէ ընկերություն չի կարող ներկայացնել այդպիսի փաստաթուղթ: Տրամաբանական հարց է ծագում, թե այդ դեպքում պատվիրատուն ինչպես է իրականացնելու ապրանքների ընդունումը: Պատասխանը հետևյալն է, իր համար ցանկալի մատակարարներից ապրանքը ընդունում է առանց խոչընդոտի, իսկ իր համար անցանկալի մատակարարներին ստիպում է ներկայացնել գոյություն չունեցող փաստաթուղթ:

Մեր ընկերությունը պնդում է, որ որևէ ընկերություն չի կարող ներկայացնել արտադրող կազմակերպության (կամ արտադրողի պաշտոնական ներկայացուցչի)՝ կողմից տվյալ ապրանքի համար տրված համապատասխանության հավաստագիր:

3. Բողոքի պահանջը

1. Չկայացած հայտարարել <<ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-22-9/8>> ծածկագրով գնանշման ընթացակարգը:

Կից ներկայացվում է

1. Բողոքի ներկայացման համար նախատեսված վճարման անդորրագրի պատճենը և անձը հաստատող փաստաթղթի պատճենը:
2. Պետռեգիստրի վկայականը:

Վերիտաս ՍՊԸ տնօրեն Աշոտ Մխիթարյան

21 հունվարի 2022թ.